պէտք եղած տեղ խոհական առատաձեռնութեամբ գործածած։

Հայապատում լեհախօս հեղինակք, նախ Նէմ-ցեւիչ և ապա Հ. Պարոնչ կը վկայեն, որ անուա-նի հայ վաճառականն Կոստանդին, մեծագումար դրամով օգնութեան հասած է Լեհաց Աւգոստոս-Սիգիզմունդ թագաւորին. նոյնպէս Պոկտան Տօ-նաւագովիչ՝ Սիգիզմունդ Դի. և նորա թոռն Դո-մինիկոս Պոկտանովիչ՝ Իլվովի հարուստ բնակչաց մին եղած է, և 1707 ին վախճանելով 250,000 զլօթի[1] արժողութեամբ կալուածներ թողած ժա-ռանգաց։ Բեռնարդովիչ Խրիսթոֆ-Աւետիք հա-ղորդութեամբ գերազանցած է քան զամենեսին, Վլադիսլաւ Դ. երբ 100,000 ոսկի (չեռվոնեց) փոխ կը խնդրէ, Աւետիք կը հարցնէ՝ թէ ո՞ր տեսակ, ոսկի, արծաթի թէ պղնձի դրամով կամենայ ստա-նալ։ Արքայն տարակուսելով, կամ լաւ ևս՝ փոր-ձել ուզելով, – Երեք տեսակովն ևս, կ'ասէ։ Բեռ-նարդովիչ իսկոյն կը կատարէ Վլադիսլաւ Դի. կամ-քը։ Այս դիպուածէս ետև արքայն մեծ յարգու-թեան ցոյցեր կու տայ առ հասարակ Հայոց, և Բեռնարդովչեանց տունը իշևան կը դառնայ ար-քայից։ Թէպէտ և ԺԷ դարու՝ առանձնականի քով այդպիսի մեծ գումար գտնուիլը առասպել երևի, սակայն պատմութիւնն յայտնի կը վկայէ։ 1677 ին Նիկոլայ անունով հայազգին 500,000 զլօթի և այլ անշարժ կալուածներ կը թողու աշխարհին

1. Զլօթի լեհաց դրամ է, որ այժմ կը համապատասխանէ 60 հարիւրէի։